



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

0095, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 19, հեռ.՝ 011 513 288

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
պարոն Գ. ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սանոսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝ խնդրում եմ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովին տրամադրել հետևյալ տեղեկատվությունները՝

1. Շիրակի մարզային հիվանդանոց (ՓԲԸ), Կապանի բժշկական կենտրոն (ՓԲԸ), Հրազդանի բժշկական կենտրոն պետական (ՊՓԲԸ), Վայքի բուժական միավորում (ՓԲԸ) և «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն (ՓԲԸ) բժշկական կազմակերպություններում գործում են Համակարգչային տոմոգրաֆիայի (ՀՏ) /KT/ և Մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա (ՄՌՏ) /MRT/ բժշկական ծառայությունները:

2. Նշված բժշկական կազմակերպություններն ունեն իրենց ամրագրված ՀՏ /KT/ և /MRT/ սարքավորումներ, թե դրանք վարձակալության սկզբունքով են գործում:

3. Եթե դրանք գործում են վարձակալության սկզբունքով, ապա որ կազմակերպությունների կողմից են իրականացվում այդ ծառայությունները:

4. Այդ կազմակերպություններում իրականացվող վերը նշված բժշկական ծառայությունները որ ֆիրմայի և որ տարեթվի արտադրության Համակարգչային տոմոգրաֆիայի (ՀՏ) /KT/ և Մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա (ՄՌՏ) /MRT/ սարքավորումներով են մատուցվում:

5. Ինչ հզորության են վերը նշված բժշկական կազմակերպություններում գործող ՀՏ և ՄՌՏ սարքավորումները:

6. Վերը նշված բժշկական կազմակերպություններում ՀՏ և ՄՌՏ սարքավորումներով բժշկական ծառայություններ մատուցող համապատասխան մասնագետների տվյալները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ